ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

24 հուլիսի 2023թ. **N 154/Մ**

ք. Ստեփանակերտ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 780-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ բաժնի 9-րդ կետի 13-րդ ենթակետը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 15-ի N 211 որոշմամբ հաստատված հավելված 2-ի 3-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական հետազոտական նախագծերի մրցույթ:

2. Հաստատել՝

1) մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Հ.Մինասյանին:

Ն.ՄԿՐՏՉՅԱՆ